

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».



Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Պէտք է սաստիկ զգուշ լինել.— Ներքին ՏԵՍՏԱԳԻՆ ՏԵՍՏՈՒԹԻՒՆ. Գերմանիայի երկտա-
սարգրութիւնը. Զէյթունի հրդեհը. Արտաքին լու-
րեր.— ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՆԻՆԻ.— ԲՈՐՍԱ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
Գործնական մարդիկ Ամերիկայում:

ՊԵՏԲ ԵՒ ՍԱՍՏԻԿ ԶԳՈՅՇ ԼԻՆԵԼ

Թատրոնական սեզօնը սկսվել է, նոր քա-
ղաքային թատրոնի շինութիւնը դեռ պատ-
րաստ չէ, և յայտնի էլ չէ թէ երբ պատ-
րաստ կը լինի, իսկ օպերային ներկայա-
ցումները շարունակվում են հին, ամառ-
այային անուանված քաղաքային թատրո-
նում:

Այժմ, երբ մեզ անդադար լուրեր են
հասնում այլ և այլ երկրների թատրոնա-
կան օտարախելի հրդեհների մասին, մարդս
ակամայ սարսուռ է զգում, երբ մտածում
է թէ ինչ կը լինի մեր հասարակութեան
դրութիւնը, եթէ կրակը յայտնվէր և մեր
փայտաշէն քաղաքային անշուրջ թատրո-
նում:

Եւ, ճշմարիտ, մեր այժմեան թատրոնից
աւելի անյարմար և վտանգաւոր շինութիւն
անկարելի է իրան երեւակայել... Կօրիգոր-
ները սաստիկ նեղ, դռները թույլ շատ
քիչ, պատերը փայտեղ, սանդուխտները,
մանուկները դէպքի ընթացքում անա-
ղուտ, փայտեղ և վերին աստիճանի
ները և այլն: Եթէ, Աստուած չանի, կրակ
յայտնվէր մեր թատրոնում, ներկայացման
ժամանակ,—այլ ևս փրկութիւն չէր լինի
ոչ ոքի համար, իսկ ըստիկ յաճատորդնե-

րը, կարելի է վստահութեամբ ասել, կայր-
վէին մինչև վերջին մարդը: Եթէ մեր այժ-
մեան թատրոնը մի օր կրակ ընկնէր մեծ
ներկայացման ժամանակ, երբ դահլիճը լի
է հասարակութեամբ, շատ քիչ մարդ կա-
զատվէր բողբոջ և կարելի է ամենամեծ
վստահութեամբ ասել, որ Թիֆլիսը մի գի-
շերվայ մէջ կը կորցնէր իր ամբողջ ինտե-
լիգենցիան: Դեռ կրակի դոհ չը դարձած
բոլորը փոխադարձապէս միմեանց կը խեղ-
դէին, փոխադարձապէս միմեանց ոտնակոխ
կանէին, միմեանց կոչնչացնէին և ծուխի
մէջ կը խեղդվէին, քանի որ դռները թատ-
րոնում շատ սակաւաթիւ են և, որ զլիսա-
ւորն է, անցքերը այն աստիճան նեղ են,
որ փախչել անհնարին կը լինէր:

Բաւական է ուշադրութիւն դարձնել այն
բանի վրա թէ ինչքան նեղութիւն է կը-
րում հասարակութիւնը մեր թատրոնից
դուրս գալու ժամանակ հասարակ ներկա-
յացման վերջնապէս յետոյ՝ պարզ հաս-
կանալու և իրան պատկերացնելու համար
թէ ո՞րքան մեծ վտանգ կը ներկայացնէր
այդ թատրոնը եթէ նրա մէջ յայտնվէր
հրդեհ ներկայացման ժամանակ:

Դաւանակ է մտածել այդ ոպաւնացող
վտանգի մասին և գտնէ ամենամահաւոր
վերանորոգութիւններ անել այդ անյարմար
փայտաշէն թատրոնի մէջ, աւելցնելով
դռների թիւը, լայնացնելով կօրիգորները,
շուր անցկացնելով թատրոնի շինութեան
մէջ, ընդարձակելով սանդուխտը և անցքե-
րը, որոնք տանում են դէպքի ընթացքում
դռները բանալով առաստաղի մօտ, որպէս
զի հարկաւոր դէպքում ծուխը կարողանայ
ազատ դուրս հոսել սրահից, կըրքապէս
աւելցնելով մուտքի ուսուղորդը լայնութե-
ան թիւը, որոնք անհրաժեշտ են զազի
յանկարծակի հանգչելու դէպքում, և այլն:

Մենք չենք վախենում ասել, որ կամ
պէտք է անպատճառ մեր առաջարկած
վերանորոգութիւններն անել, կամ պէտք է
կատարելապէս փակել թատրոնը և սպասել
մինչև նոր թատրոնական շինութիւնն ա-
ւարտվի, եթէ ոչ հրդեհի դէպքում մեր
թատրոնը կարող է մեզ այնքան զոհեր
տալ, որքան եւրօպական ոչ մի թատրոնա-
կան հրդեհ տուած չէ երբեք:

Իսկ ինչ վերաբերվում է նոր քաղաքային
թատրոնին, մենք դիտաւորութիւն ունենք
այս օրերս այցելել այդ շինութիւնը և
ապա յայտնել ընթերցողներին մեր կարծի-
քը այդ նոր շինութեան յարմարութեան
կամ անյարմարութեան մասին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Օգոստոսի 17-ին

Նորերումս առիթ ունեցաւ այցելել Ղուբա քա-
ղաքը, որը բաւական վատ տպաւորութիւն թո-
ղեց ինձ վրա: Այստեղ հայերը մի եկեղեցի ու-
նեն, որը կառավարվում է մի քահանայով և մի
տիրացուով: Դաւանացութիւնը կատարվում է
հին եղանակով:

Գալով ուսումնարանին վերաբերեալ գործերին,
կը տեսնեմք աւելի վատ կողմերը: Այստեղ վարձ-
ված են երկու ուսուցիչներ, որոնցից աչքի է ընկ-
նում հայոց լեզուի տգէտ ուսուցիչը, որը ստա-
նում է 600 ռուբլի ռոճիկ, սենեակով, ծառայով
և այլն: Այդ վարձպետը լինելով մի հոգաբար-
ձուի բարեկամը, ստացել է ուսուցչութեան պաշ-
տօն Ղուբայում, իսկ որովհետև յիշեալ պարոնը
ուսուցանում է բարեկամ հոգաբարձուի երեխա-

ներին ճիշտապէս, ուրեմն հասկանալի է թէ ինչու է
նա ստանում 600 ռուբլի: Երկրորդ հոգաբար-
ձուն այնքան բարեկամասէր է, որ յիշեալ պարո-
նին ուզում է քահանայ ձեռնադրել տալ: Իսկ
միւս հոգաբարձուները կասեա թէ ձայն չունեն
որպէս զի բողբոջն այս բոլորի դէմ: Անցնեմք
դէպի հայոց գրատունը. այս վերջինս գտնվում է
ուսումնարանին կից սենեակում: Գրատունը և ըն-
թերցարանը զետեղված են մի սենեակում: Մի
կողմն ենք թողնում գրադարանի անմաքրութիւնը
և ուրիշ մանր մունր աչքի ընկնող պակասու-
թիւնները: Գրատունը հազիւ թէ ունի ընդամենը
մի 50 կտոր գիրք, որոնք ժողովվել են համարեա
թէ նուիրատուութեամբ. շատ զգրքեր անկադմ են,
իսկ լրագիրներ բոլորովն չը կան, բացի հնրից,
իսկ նորերը, ինչպէս տեղեկացայ, փոստից ուղիղ
ստանում է մի ուրիշ հոգաբարձու, որը յետոյ
երբ քէֆը կը տայ, ուղարկում է հին համարները
գրադարան: Իսկ գրապահը, հայոց լեզուի ուսու-
ցիչը, ներկայ չէ լինում գրատան մէջ և բոլորու-
վին, ինչպէս տեսայ, հող էլ չէ տանում գրատան
մասին: Վերջապէս Ղուբայի հայոց մէջ մի ուրա-
խալի երեւոյթ չէ լինում գտնել: Ի հարկէ, եթէ ե-
կեղեցին, ուսումնարանը, գրատունը և այլն այդ
գրութեան մէջն են, էլ ինչ լուսաւորութիւն կը
լինի պահանջել հասարակութիւնից: Ղուբայի գը-
րատունը, որը իր գոյութեամբ օգուտ չէ բերում,
բաւական վնաս է հասցնում թէ հասարակութեան
և թէ խմբագրութեանը: Առաջ, երբ գրատուն չը
կար, ժողովրդի մի մասը լրագիրներ էր ստա-
նում, իսկ հիմա հիմնվելով նրա վրա թէ ես մի
տարով գրատանը գրված եմ, լրագիր այլ ևս չեն
ստանում: Գրատանց չօգտվելով հասարակութիւնը
մնում է խաւարի մէջ, իսկ լրագիր չը ստանալով
վնասում է թէ իրան և թէ խմբագրութեանը: ***

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՐԳԻՆԿ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Դրամատէր եր— «ազգի պարծանքն եր»

Մարդկային շրջանում ոչինչ քան այնքան փա-
ռաւոր աշողութիւն չունի, որքան անձնական ա-
շողութիւնը, ասում է ամերիկական առածը, և
դա կատարելապէս ճիշդ է Միացեալ-Նահանգների
վերաբերութեամբ: Ոչ մի տեղ, կարծես, անձնա-
կան աշողութիւնը չունի այնքան երկրպագուներ,
որքան այդ երկրում:

Տարածուի գրքերը վկայում են, որ հին հրէանե-
րը ամօթ էին համարում աղքատութիւնը և հի-
ւանդատ դրութիւնը: Այդ կողմից ամերիկացիները
հրէաների հետեղներ են: Հարուստ մարդիկ մեծ
յարգ է պատիւ ունեն երկրի մէջ, թէպէտեւ այս-
տեղ չէ կարելի տեսնել աղքատները և ծոյրերի
ստորաբարելութիւնը այնպիսի հարուստների ա-
ռած, որոնցից կարելի է մի բան սպասել: Եւ ա-
մերիկացիները, յարգելով հարուստներին, չեն դե-
կավարում անձնական որ և է հաշիւներով. բուն
ամերիկացիները պարզ ի պարզոյ պարծենում
են իրանց հարուստներով, և այդ նրանով են ա-
պացուցանում, որ վերջին տասը տարիների ըն-
թացքում ընտրում են կոնգրէսի համար այնպիսի
անձանց, որոնք մեծ փողեր են աշխատել իրանց
մասնաւոր ձեռնարկութիւններում: Եւ ամերիկա-
ցիները այդպէս են վարվում, որովհետև համոզ-
ված են որ, այն մարդիկը, որոնք իրանց ըն-
դունակութիւնները և աշխատասիրութեան շնոր-
հով հարստացել են, նշանակութիւն են ստացել,
դրանք աւելի պատրաստված են և աւելի մօտ
ծանօթ են գործնական կեանքին, այդ պատ-
ճառով էլ դրանք կօնգրէսի օգտաւէտ անդամներ
կարող են լինել:

Ամերիկացիները անկեղծ կերպով պարծենում

են իրանց հարուստներով. հարուստները, երկի-
շողորմութիւն են նրանց աղքատին ինքնասիրու-
թիւնը, այսինքն այն հարուստները, որոնք իրանց
աշխատասիրութեան շնորհով են հարստացել և
իրանց հարստութիւնը չեն դործ դնում ի վնաս
հասարակութեան և իրանց բանտարանների: Բացի մի
քանի բացառութիւններից, ամերիկացի հարուստ-
ների մէջ շատ դարձացած է հասարակութեան
առաջ պատասխանատուութեան ինքնաճանաչու-
թիւնը: Այդ ինքնաճանաչութիւնը ստիպում է
հարուստներից շատերին դրամական խոշոր գո-
հաբերութիւններ անել: Մի քանի տարիներ ըն-
թացքում հետեւեալ խոշոր գոհաբերութիւններ են
եղել. պ. Ռիչ երկու միլիոն դոլար է նուիրում
Բոստօնի համալսարանին, լէստադը կազմ—մէկ
և կէս միլիոն է նուիրում Բէյլաքական ուսումնարանի
օգտին. m-r Otis—մէկ միլիոն է նուիրում առա-
քելութեան օգտին. պ. Ալատեր—մէկ միլիոն է
նուիրում յօգուտ նեղբերի ուսումնարաններին. պ.
Գիւրան մէկ միլիոն է նուիրում կանանց բարձ-
րագիւմն է մէկ միլիոն է նուիրում ձգտում են
ուսման համար: Այլ դրամատեղեր ձգտում են
իրանց բանտարանների դրութիւնը լուսացնել, և լա-
ւացնելով բանտարանների դրութիւնը, իրանք ևս օգտ-
վում են, որպէս, օրինակ, Պոլման, մի ամբողջ
քաղաք կառուցանելով իր բանտարանի համար,
գրանով աւելի ևս մեծացրեց իր եկամուտները:

Ուրիշ գործարանատէրեր, համոզված լինելով թէ
որքան աւելի աղքատները է դրել կարգաւ խմացող
բանտարան աշխատանքը, ուսումնարաններ են բաց
անում: Մի գործարանում այցելուի աչքին էր
ընկնում մեծ տառերով գրված հետեւեալ յայտա-
բարութիւնը: «1884 թիւ յուլիսի 4-ից յետոյ այս
գործարանում այլ ևս չեն վարձի գրել կարգաւ
չխմացողներին»:

Գործնական նպատակներին դիմել մինչև ան-
գամ բարեգործութեան միջոցով—դա բուն ամե-
րիկական սովորութիւն է, և դա բացատրութիւն
ները կարծես չէ:

Ամերիկացի հարուստների մէջ վաղուց արդէն
սովորութիւն է մտած իրանց հարստութեան մի
մասը նուիրել բարեգործական կամ ուսումնարա-

նական նպատակներով, յօգուտ իրանց համաքա-
ղաքացիներին: Թէպէտև անկասկած է, որպէս ասված
է վերևում, որ շատ հարուստներ առատ նուիրա-
տութիւն են անում դիշանելով միայն հասարա-
կական կարծիքի ճշմանը և մասնով անհրաժեշտ
թիւններին: Թէ քաղաքացիք ինչ են սպասում ի-
րանց հարուստներից, սակայն շատերը—և շատ
շատերը—ամերիկացիներից նուիրում են իրանց
արին քրտինքով ժողոված փողերը ընթերցարա-
ններ, ուսումնարաններ, հիւանդանոցներ, ապա-
տարաններ հիմնելու համար: Եւ ժողովուրդը խո-
նի կերպով զգում է լուսաւորեալ հարուստների
այդ բարեգործութիւնները և մասնով անհրաժեշտ
տաւանում է այնպիսի մարդկանց անունները, որ-
պիսիք են Պիտեր Կուպէր, Ջօն Վաննամէկէր,
Էդրա Կորնէլ, Ջօն Խօպկինս, Վաստար, Ջօրջ
Չայլըս, և այլ դրանց նմանները:

Խօսենք այժմ Նիւ-Եօրկում մեծ ժողովրդակա-
նութիւն ունեցող հարուստ Պիտեր Կուպէրի մա-
սին, որը միտա ինչպէս տարեկան ծերունի հա-
սակում, 1883 թիւ գարնանը և որին ողբացին
ամենքը: Կուպէր մեռաւ, երբ արդէն իրագործված
տեսաւ իր կեանքի ցնորքը, այն է դրամադուրա
տալով, հիմնեց «Cooper Union» անուանված
հիմնարկութիւնը, ուր աղքատ երիտասարդութիւ-
նը կարող է կատարելապէս ձել կրթութիւնը ըս-
տանալ գիտութիւններին, արուեստների և տեխ-
նիկական ուսման դասազան մասնագիտական ձեւ-
երում: «Cooper Union»-ի շինութեան կառուց-
ման վրա—նրա լուսաւոր մարդասիրութեան այդ
արժանաւոր և յաւիտենական յիշատակարանի վը-
րա—Պիտեր Կուպէր ծախեց մինչև 700,000 դոլ-
լար և, բացի դրանից, երկու միլիոն դոլլարից ա-
ւելի ծախեց գործիչներին և դասադան դիտա-
կան յարմարութիւններին և ձել ընթերցարանի
վրա: Բայց ինչ միջոցներով էին հաւաքված այդ
փողերը:

Պիտեր Կուպէր ծնվեցաւ ոչ միայն աղքատ հօ-
րից, բայց և մի վերին աստիճանի անհաստատաւիտ
մարդուց, որը ամեն բանից անբաւական էր և

որը միշտ իր ընտանիքով թափառում էր մէկ
տեղից միւս տեղ: Պիտեր իր հօր ինն զաւակ-
ներից հինգերորդն էր և ութ տարեկան եղած
ժամանակ միայն կէս տարի է ուսումնարան յա-
ճախել, այն ևս օրամէջ: Ութ տարեկան դառ-
նալուց յետոյ նա ստիպված էր հրաժարվել ու-
սումնարան յաճախելու չափաւորութիւնից, չը նայե-
լով որ ուսումը ձիւ էր, որովհետև նա պէտք է
բուրդը քաղէր ձաղարների կաշիից, օղնելով իր
հօրը բրդէ զլեպները պատրաստելու գործում.
այն ժամանակ Պիտեր ընտանեկան կոշիկաւոր ևս
էր, որովհետև երեխաները տանը առանց կօշիկ-
ների էին նստած. մի անգամ հայրական հին
կօշիկը քանդելով, Պիտեր բարեխաղճութեամբ կտը-
տեց այդ կօշիկը, ուսումնասիրեց նրա կաղնութիւնը
և ապա այդ հին կօշիկից երեխաների համար մի զոյգ
նոր կօշիկ կարեց: Այդպիսի աշխատանքների մէջ
անցաւ նրա ամբողջ մանկութիւնը, բայց 17 տա-
րեկան դառնալուց յետոյ նրան աշողկեցաւ հա-
ւաքել տասը դոլլար, և նա ինդրեց հօրից թող-
նել իրան Նիւ-Եօրկ գնալ:

Երիտասարդ Կուպէր մայրաքաղաքում իր տա-
ւը դոլլարով վիճակաւաղի մի տոմսով գնելով,
տանտու տուեց: Դասը շատ ծանր էր, բայց օգ-
տաւէտ: Այդ դառն դասից յետոյ Կուպէր իր
ամբողջ կեանքի ընթացքում երբեք չէր մասնակե-
ցում աղաւթ տալած խաղերին և չէր աշխա-
տում կրկնապատկել իր կապիտալները բօրսային
խաղերով:

Իր կրթութեւնը ողբալու ժամանակ չունէր Պի-
տեր, և նա մի կառապանի մօտ կանգնեց ամ-
սական երկու դոլլար վարձով և հինգ տարվայ
ընթացքում կառապանութիւն սովորելու պայմա-
նով: Կառապան-տէրը չէր արգելում նրան երեկո-
ները ընթերցանութեամբ պարապել և մի քանի
ժամանակից յետոյ այնպէս սիրեց նրան, որ ա-
ռաջարկեց նրան փող փոխ տալ իր սեփական
կառքեր շինելու գործարան բանալու համար:
Բայց Կուպէր հրաժարվեց այդ առաջարկութիւ-
նից, չը ցանկանալով պարտք ունենալ, և շաքա-
թական 9 դոլլար վարձով մտաւ մի բրդէ գործա-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 30-ին, Թագավոր կայսրի անուանա-
կոչութեան տօնի օրը թիֆլիսի բոլոր դաւանու-
թիւններէ եկեղեցիներում պատարագ և զոհարո-
ղական մատչանքներ եղան: Ամբողջ քաղաքը
դարձաւ իւր զոյնըդոյն զօրշապարտի, իսկ երե-
կոյեան լաւատարմած էր: Նոյն երեկոյ քաղաքին
թատրօնում ներկայացուցաւ «Жизнь за Царя»
առնայ օպերան:

«Մշակի» խմբագրութիւնը խոնարհաբար խնդ-
րում է իր բաժանորդներին վերջապէս յիշել որ
ժամանակ է վճարել ապագոյիս: Միշտ խը-
տովեմամբ պահանջել ուրիշներէջ նրանց
պարտաւորութիւններէ կատարելը, բայց երբէք չը
կատարել իրանց պարտաւորութիւնը,—ահա հա-
յերի յատկանիշը: Հայը ամեն բանից դժգոհ է,
մեծ մեծ, նոյն իսկ անհնարին բաներ է պահան-
ջում իր գործիչներէ, իսկ ինքն չէ կատարում
իր ամենամահաբաժնի պարտաւորութիւնը և չէ
վճարում տարիներ ընթացքում լրագրի բաժա-
նորդագրելը, որին գրվում է: Հայը պահանջում է
որ հայոց լրագրի լինի հրատարակութիւններէ մի
կատարելատիպ, բայց ինքն չէ վճարում լրագրի
տարեկան վարձը, ուրեմն միշտ էլ չէ տալիս որ
լրագրի որ թէ միայն լաւանայ, կատարելագործ-
վի, բայց նոյն իսկ վտանգի մէջ է գցում լրագրի
գոյութիւնն անդամ:

Մենք լսում ենք, որ թիֆլիսի Ներսիսեան դպ-
րոցի աւարտած աշակերտները, ինչքան խնդրում
էին մինչև այժմ չէին ստանում իրանց վկայական-
ները: Աշակերտները միշտ դիմում էին այդ մասին
հայր-տեսին, բայց միշտ բացասական պատաս-
խան էին ստանում: Պատճառը որ աւարտած ա-
շակերտները իրանց վկայականները չէին ստանում
այն է, որ հոգաբարձուներէ մեծ մասը քաղաքից
բացակայ էին: Մինչ Կոթոր էր, միւսը Բորժօմ, եր-
րորդը Գերմանիայում, չորրորդը Թիւրքիայում,
զուգեք հինգերորդը Չինաստանում, և հոգաբար-
ձական ժողովներն էլ չէին կայանում: Իսկ ա-
ւարտածները ինչ մեղաւոր են. նրանք անհամբեր
սպասում էին իրանց վկայականներին, որպէս զի
կեանքը մտնեն, դործ դառնեն, իրանց ապրուստի
մասին հոգան, սկսեն վերջապէս հաց աշխատել:

բան: Այդտեղ նա հնարեց ոչխարներէ բուրդը
խուզելու կատարելագործված մեքենայ, և չորհիւ
դրա, երկու տարվայ ընթացքում հաւաքեց 500
դոլար. այդ բոլոր փողերը տուեց իր ժողովը,
թողնելով իրան միայն իր ռոճիկը:

Քսան և երեք տարեկան Պիտէր Կուպէր պը-
սակից, և առաջին մանկան ծնունդը նրա հնա-
նորութեանը մղուեց տուեց նոր ուղղու-
թեամբ: Նա հնարեց և չինեց մի առանձին ճո-
ճանակ, որ առանց մէկի օգնութեան օրորվում
էր, վերեց զանվում էր շարժվող հովիտը երկխա-
լից ճանձեր քշելու համար և երաժշտական գործիչ:
Սակայն այդ գիւտերը նրան դրամական ոչինչ
չա՛ն չը տուեցին, և նա բնակութիւն հաստատեց
Նիւ-Եորքի արտարձաններէ մէկում, ուր գնեց
մի կիսաքաղաք գործարան և սկսեց սօսիւն (SOS)
պատրաստել ծախելու համար: Այդ գործով Կու-
պէր հաստատ հիմը դրեց իր հարստութեան: Ամ-
բողջ երեսուն տարիներ աշխատում էր նա, վա-
րելով գործը միայնակ, մի քանի բանտրներ
հետ միասին, և ինքն էր տանում սօսիւն իր
գնողներէ մօտ, և հաշուեզրեքներ էլ ինքն էր
գրում: Առաջին տասն և հինգ տարիներ ըն-
թացքում նա մինչև անգամ ինքն էր կրակ վա-
րում գործարանում—աշխատում էր բոլորովին
միայնակ, ամբողջ օրը սօսիւն եփելով էր պարա-
պած, իսկ գիշերը անց էր կացնում նամակներ
գրելով, հաշիւները կարգի բերելով և ընտանիքի
հետ ընթերցանութեամբ: Իր սեփական գործա-
րան հիմնեց առաջ, վեց տարիներ ընթաց-
քում, Կուպէր ինն զանազան պարապմունքներ
փոխեց և այդ իւրաքանչիւր զբաղմունքներէ նա
փող էր աշխատում: Նրա կանօնն էր, գործի մէջ
մնալ մինչև այն ժամանակ, քանի որ նա չա՛ն էր
տալիս, և թողնում էր այդ գործը, հէնց որ մի
ուրիշ աւելի ձեռնառու գործ էր երևան գալիս:
Չը նայելով իր ծանր աշխատանքին և ընտանի-
քին վերաբերեալ հոգանքին, Կուպէր ժամանակ
էր գտնում պարապել քիմիայով և մեխանիկայով,
և չը նայելով որ դուրսնուկեան համար անգամ
ժամանակ չուէր, նա չը վստահացաւ հրաժար-

ԲԱՐՈՒԻՅՑ մեղ ուղարկված է հետեւալ նկատու-
ղութիւնը: «Կեռ շատ ժամանակ չէ, որ Բաղրի
թղթակիցները սովորութիւն ունէին սուտ ու-
շինծու լուրեր հաղորդել լրագրիւններին. օրինակ
մէկը դովաստութիւն է անում Մարդասիրական
ընկերութեան դաշխնում չը կայացած կօնցերտի
մասին, միւսը հաղորդում է կենդանի մարդու
մահուան ու նրա թողած կտակի մասին և այլն:
Շնորհով «Մշակի» մի առաջնորդող յօդուածի
վերջ արվեցաւ այդպիսի անամօթ գրութիւններ:
Այժմ մի ուրիշ տեղ սովորութիւն է մտնում
մեր մէջ, որ օրից օր աւելի աչքի է ընկնում.
դա ամեն մեռած մարդու յիշատակը փառաւոր
դավանական ճառերի արժանացնելն է, լինի այդ
մարդը ծաղիկ հասակում թառամած աշակերտ,
թէ իր կենքում ոչինչ հասարակաց գործ չը
կատարած ծերունի, լինի դա աննշան արհեստա-
ւոր, ուսուցիչ, աստիճանաւոր, լինի դա իր կեն-
քում բարեկործութիւններ թէ չարագործութիւն-
ներ արած անձնաւորութիւն: Տգէտ ու ինքնահա-
ւան տիրացուներ յարմար առիթ են դառնում մե-
ռածի վրա վերած դավանականների կարգալով
ցոյց տալ իրանց գիտութիւնը, աղբիւս էր, աղ-
գի բարեւար խօսքերը ամեն մի հանգուցեալի
յիշատակին շուայել... Մարդ աւամայ յիշում է
«Մշակի» աշխատակից Հայկակի խօսքերը՝ «Կը
վախում թէ աղբիւս էր բառն այնքան գործա-
ծական դառնայ, որ չուտով ասեն թէ այսօր այս
ինչ աղբիւս էր վստապալ էֆէնդու աղբիւս էր կի-
նը աղբիւս էր աղայ մը ծնաւ»:

Կիրակի օր քաղաքային թատրօնում սկսվեցան
օպերայի ներկայացումները: Առաջին անգամ տա-
լիս էին Գլխակայ «Жизнь за Царя» օպերան:
Մասնակցողները գրեթէ բոլորն էլ ծանօթ են
թիֆլիսի հասարակութեան. նորն էր օր. Չլիպա-
նա, որ բաւական դուրեկան կօնտրաւում ձայն
ունի և կարելի է ասել աշխարհիկ ունեցաւ:
Գէկորացիները բոլորն էլ նոր են և մէջները
կան աչքի ընկնողներ: Օրկեստր և խօրը աշո-
ղութեամբ կատարում էին իրանց գործը: Շատ
թող էին երկրորդ գործողութեան մէջ կատար-
վող պարերը: Դանիէն լի էր:

Լսում ենք որ Կուպիլայի ս. Աստուածածին եկե-
ղեցու Գիւտ քահանայ Աղանեանց էլմիսթին պի-
նօղի հրամանով փոխադրված է Վանքի մայր-եկե-

վել հասարակութեանը ծառայելուց, երբ նրան
ուսումնարանական խորհրդի նախագահ ընտրեցին:

Բացի դրանից Կուպէր մի աներեակայելի սէր
ունէր դէպի աշխատանքը. հաւատարիմ մնալով
իր սօսիւն պատրաստելու գործին, նա իր ոյժե-
րը փորձում էր ամեն բանի մէջ, սկսած աղիւս
պատրաստելուց և վերջացնելով չոգեշարժ մեքե-
նայով: Թիւրքերի դէմ յղների պայտասմութեան
ժամանակ, 1824—25 թուերին, Կուպէր չինեց մի
տօրպէղային նաւ, և ուղարկեց ապստամբներին:
Նրա եռանդը ոչ մի արգելքի առաջ չէր ընկն-
վում: Մի անգամ, դեռ իր հարստանալուց շատ
առաջ, այրվեց նրա սօսիւնի գործարանը, բայց
նա չը յուսահատվեց, հաւաքեց իր մնացած փո-
ղերը, օգուտ բաղեց իր կրէդիտից, և հրդեհի հէնց
երկրորդ օրը նոր շինութիւններին համար նիւթեր
բերել տուեց և չուտով առաջին գործարանից ե-
րեք անգամ աւելի մեծ գործարան կառուցեց:

Իր մեծ գործի աշողութեան համար, Կուպէրին
անհրաժեշտ էր ձեռքում ունենալ երկաթու-
ղային մի գիծ: Երկաթուղային մի ընկերու-
թիւն նրա գործարանի մօտ սկսեց տասե-
րեք մղոն երկաթուղիներով մի երկաթուղա-
յին գիծ անցկացնել, բայց ընկերութիւնը այդ
ձեռնարկութիւնը կիսատ թողեց, ասելով թէ
ճանապարհը այնպէս ծուռն ու մուռ է, որ ոչ
մի չոգեշարժ մեքենայ չէ կարող առաջ ընթա-
նալ: Այն ժամանակ ինքն Կուպէր ձեռնարկեց
գործին, և չուտով ինքն հնարեց և չինեց առա-
ջին չոգեշարժ մեքենան Ամերիկայում. այդ օտա-
րոտի չոգեշարժային կայքից վաղօնի նման մի
արկի, նստեցրեց նրա մէջ երկաթուղու դիրեկ-
տօրներին, և սկսեց չըջնել նրանց հէնց իրան
գծի վրա, մի ժամվայ մէջ 13 մղոն անցնելով:

Ապա Տրէնտօնում Կուպէր կառուցեց երկաթի
ամենամեծ գործարանը Ամերիկայում, Պենսիլվա-
նիայում չինեց մի ուրիշ մեծ գործարան, իսկ
Նիւ-Եորք նահանգում նա գնեց պողպատի և եր-
կաթաթի գործարաններ: Անգլիայում երկաթա-
հանքեր գնեց, ութ մղոն տարածութեամբ երկա-
թուղային գիծ անցկացրեց այդ հանքերի միջով

դեղին: Նրան յանձնված է հանգուցեալ Թագէտ
քահանայ խոջայնութեանցի ծուլը, որի վրա թե-
միս սրբ. առաջնորդի ձեռքով մի քանի ժամա-
նակ առաջ ձեռնադրած և կարգված էր հանգու-
ցեալ խոջայնութեանց քահանայի օրդին:

Գալ 1888 թուականի յունիս ամսին Պետեր-
բուրգում կայանալու է մի միջազգային ժողով,
որի պարապմունքների նիւթ պէտք է լինի ար-
հեստաւորաց ուսումնարանների հարցը:

Լսվում է որ. ֆինանսների մինիստրութեան
մէջ մշակված է մանրամասն ծրագիր Ռուսաստանի
մի քանի տեղերում ողելից խմիչքների պետական
միւնսպաճառութիւնը մտցնելու: Այդ կը լի-
նի առաջին փորձ և եթէ աջողվի, այն ժամա-
նակ միւնսպաճառութիւն կը մտցնի և միւս նա-
հանգներում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

Գերմանական ուսանող երիտասարդութեան
այժմեան ընթացքը, նրա ուղղութիւնը և ձգ-
տումները ներկայումս ջերմ ըննադատութիւնների
և վիճարկութիւնների նիւթ են տուել գերմա-
նական մամուլին: Ուսանող երիտասարդութեան
այժմեան ուղղութեան վերաբերութեամբ աղա-
տամիտ և պահպանողական մամուլը երկու բա-
նակի են բաժանվել. ազատամիտ կուսակցութիւ-
նը խստութեամբ յարձակվում է երիտասարդու-
թեան այժմեան ընթացքի վրա, իսկ պահպանո-
ղականը նրան իր հովանաւորութեան ներքոյ է
առնում: Այդ ուղղութեան արժանի հարցի
արժարժիլու գլխաւոր պատճառը եղաւ մի յայտ-
նի պաշտօնական անձնաւորութեան, այն է Բու-
սէի ճառը: Բոսսէ վերին աստիճանի խիստ կե-
րպով արտայայտեց այն միտքը, ինչ որ վաղուց
արդէն պտտում է թէ գերմանական մամուլի և
թէ հասարակական դանաղան չըջանալի մէջ:
Բոսսէ յանդիմանում է գերմանական ուսանող ե-
րիտասարդութեանը այն բանի մէջ, որ նա վե-
րին ժամանակներում բոլորովին չունի բարձր ի-
դէալներ, զանազան իդէալական ձգտումներ, այլ

և այդ երկաթուղով տարեկան մօտ 40,000 տօնն
երկաթ էր դուրս բերում:

Այդ ժամանակ Կուպէր արդէն միլիօնատէր էր,
բայց առաջվան պէս մնաց ընտանեկէ և ջերմե-
ռանդ կողմնակից բոլոր նոր գիւտերով: Երբ պրո-
ֆէսօր Մօրգ հնարեց հեռագրել, Կուպէր առա-
ջինն էր, որ խոստովանեց այդ գիւտի մեծ նշա-
նակութիւնը: Բացի դրանից, 1865 թվից սկսած
մինչև 1875 թվը, Կուպէր գլխաւոր և համարեա
միակ նպաստողն էր ամերիկական աշխարհագրա-
կան ընկերութեան:

Քառասուն տարի արդէն անց էր կացրել Կու-
պէր անդադար աշխատանքի և հարստանալու
ձգտման մէջ: Նրա աշողութիւնը անվիճելի էր.
բայց դարմանալին այն էր, որ այդ ամբողջ ժա-
մանակի ընթացքում նրա անունը անարատ էր
մնացել. նրա աշողութիւնը մինչև անգամ չէ կա-
րել վերադրել բաղին: Նրա աշողութիւնը հե-
տեանք էր ծանր և անդու աշխատանքի, և ժա-
մանակի խիստ անտեսութեան: Ի հարկէ շատ էր
նպաստում Կուպէրի աշողութեանը և նրա ա-
ռողջ դատողութիւնը, մտքի արագութիւնը ու
նրա ազնութիւնը. Կուպէրի խօսքը նրա մօրհա-
կից պակաս դէն չունէր, և դէպի նրան ունեցած
հաւատը անսահման էր:

Թէ որ աստիճան այդ միլիօնատէր մարդը
պահպանեց սրտի թարմութիւն և երիտասարդա-
կան ձգտում դէպի բարին և արդար, ակնյայտ-
նի երևում է այն փաստից, որ Կուպէր, տեսնե-
լով թէ իր երկաթի գործարանը չափից դուրս
մեծ եկամուտ է բերում, երկաթի գինը իջեցրեց
ասելով, թէ անազնութիւն է թանգ ծախել եր-
կաթի պէս մի անհրաժեշտ առարկայ:

Ոչ պակաս դարմանալի և պարզ մարդ էր Կու-
պէր բարեգործութեան մէջ: Յայտնի է, որ Միա-
ցեալ-Նահանգներում 1874 թվից մինչև 1877
թիւը առատորը ընկած էր և բաղմաթիւ բան-
ւորներ թափառում էին քաղաքից քաղաք և գիւ-
ղից գիւղ գործ գտնելու համար: Եւ այդ սարսա-
փելի տարիներին ընթացքում, երբ ժողովրդի մեծ
բազմութիւն մնացել էր առանց ապաստանի և

հետևում է միմիայն նեղ, գործնական նպատակ-
ներ, և զբաղված է լոկ դիւր ձեռք բերելու
ձգտումներով: Իր յայտնած միտքը հաստատելու
համար Բոսսէ մի տեսութիւն արաւ գերմանական
ուսանող երիտասարդութեան այժմեան դու-
թեան մասին, և շատ երևոյթներ առաջ բերեց
իր խօսքերը ապացուցանելու համար: Բոսսէ
յատկապէս շնչեց այն երիտասարդներին վրա,
որոնք իրանց նուիրում են իրաւաբանական-դա-
տաստանական գործունէութեան, որոնք, հեղինա-
կաւոր և գործին լաւ ծանօթ անձանց վկայու-
թեամբ, աչքի են ընկնում իրանց սահմանափակ
ուղղութեամբ և լայն նպատակներից դուրս գոր-
ծունէութեամբ: Շարունակելով ըննադատել երի-
տասարդութեան ընթացքը, Բոսսէ օրինակ բերեց,
թէ ինչպէս մի քանի համալսարաններում կադ-
մակերպվել են այսպէս կոչված՝ արխիտեկրատ-
ուսանողների խմբեր, որոնք հիմնում են իրանց
համար առանձին ընկերութիւններ և արխիտե-
կրատական կլուբներ, որպէս զի առիթ չունե-
նան խառնվելու այն համալսարանական երիտա-
սարդութեան հետ, որոնք չեն պատկանում արխ-
տեկրատական շրջանին: Այդ արդէն մի վերին
աստիճանի հակակրեկի երևոյթ է: Գիտութիւնը,
ասեց իր ճառի վերջում Բոսսէ, քիչ է հետաքը-
քում այդ երիտասարդութեանը, նրանց բոլոր ու-
ղղութիւնը դարձրած է այն բանի վրա, որ-
քան կարելի է չուտով մի տաք տեղ ստանան:

Այս այդ մտքերն են, որոնք անազին աղմուկ են
բարձրացրել գերմանական դանաղան չըջանա-
րում, և մամուլի մէջ: Մամուլի մեծ մասը հաս-
տատում է, որ ճշմարիտ այդ չարքը աճում է, որ
երիտասարդութիւնը սկսել է ձգտել դէպի ա-
րխիտեկրատութիւնը, որ նա քիչ է հետաքը-
քում գիտութեանը և զեղարուեստով, այլ իր գը-
խաւոր ուղղութիւնը դարձրել է շահախնդրա-
կան նպատակների վրա, որով և հասարակակա-
ն մտաւոր-բարոյական ոյժը զրկվում է անկու ըն-
դունակութիւնից: Այդ մտքերը յայտնում և պաշտ-
պանում են մամուլի ազատամիտ ներկայացուցիչ-
ները: Պահպանողական մամուլը, ընդհակառակը
ուզում է արդարացնել ուսանող երիտասարդու-
թեան այս ընթացքը: Նա ասում է, որ անցան
այն ժամանակները, երբ գերմանական երիտասար-
դութիւնը ողորդվում էր յայտնի իդէաներով և
ձգտումներով, և պահպանողական մամուլի կար-

համարեա սովից մեռնում էր նոյն իսկ Նիւ-Եոր-
կում, ծերով Կուպէր ամեն օր, 3 ժամից մինչև
6 ժամը երեկոյեան նստած էր լինում իր տան
առանձնասենեակում, տան դուռը բաց էր ամեն-
քի համար, և տանտէրը նստած էր իր դրասեղա-
նի մօտ, որի մի կողմը անված էին արձաթէ
դօլլարներ, իսկ միւս կողմը թղթէ դօլլարներ
Ով և զար Կուպէրի մօտ այդ ժամերին փող
խնդրելու, բաւականացրած էր վերադառնում.
այնտեղ չէին հարցնում թէ արդեօք աղքատը
արժանի է օգնութեան, չէին քննում թէ այդ փո-
ղերը ինչ բանի վրա կը գործ դնի ստացողը, բա-
ւական էր, որ եկողն ասէր, թէ ինքն փողի կա-
րօտութիւն ունի: Պիտէր Կուպէր այսպէս էր
դատում, որ եթէ մէկը դալիս է իրանից ողոր-
մութիւն խնդրելու, կը նշանակէ թէ վատ դրու-
թեան մէջ է գտնվում: Եւ այդպիսով երեք ձմեռ-
ներ ընթացքում Կուպէր իւրաքանչիւր շաբաթ
բաժանում էր 1,500 դոլլար:

Շատերը կարող են մեղադրել Կուպէրին, որ
նա դրանով քաջալերում էր ծուլութիւնը և մու-
րացկանութիւնը, բայց Կուպէր իր ամբողջ կեան-
քում չէր մտաւում, թէ ինչ է քաղցածութիւնը,
որ ինքն շատ անգամ փորձել էր երիտասարդու-
թեան ժամանակ: Եւ պէտք է ասել, որ նրա բա-
րեգործութիւնները զգում էր ժողովուրդը: Երբ
որ Կուպէր իր բաց կառքով անցնում էր քաղաքի
փողոցներով, բոլոր բանտրները հանում էին գը-
լխարկները նրա առաջ, կառապանները մի կողմն
անցնելով, ճանապարհ էին տալիս նրան. իսկ երբ
նա, 1883 թվի ապրիլին 92 տարեկան վախճանվե-
ցաւ, ամբողջ քաղաքը սգի մէջ մտաւ. հասարակա-
կան բոլոր շինութիւնների վրա դրօշներ իջեցրին,
նրա դագաղի ետեւից գնում էին ժողովրդի անա-
զին խմբեր, որոնք այդ ժամին թողել էին իրանց
պարապմունքները. իսկ նրա անունը մինչև այժմ
հպարտութեամբ են արտասանում բոլոր ամերի-

ծիբով գերմանական ազդի այժման գլխավոր ի-
դեալը պէտք է լինի պաշտպանել այն բոլորը,
ինչ որ տարիներ ընթացում անապի պատե-
րազմներով ձեռք է բերել Պաշտպանողական մատու-
լը նոր սերնդի համար ուրիշ առերկրային և բար-
ձր իդեալ չէ գտնուում:

Այդպէս անա գերմանական մամուլի ազատա-
միտ և պահպանողական կուսակցութիւնների
կարծիքները տարբերութիւն են ուսանող երիտա-
սարդութեան մասին, որի ընթացքը և ուղղութիւ-
նը, ի հարկէ, մեծ նշանակութիւն ունի երկրի
հասարակական և պետական կեանքի ամբողջ ա-
պագայի համար:

ԶԵՅԹՈՒՆԻ ՀՐԴԵՂ

Զէյթունի հրդեհի մասին հետեւեալ տեղեկու-
թիւններն են հաղորդում Զէյթունից Պօլսի «Արե-
ւելք» լրագրին:

Հրդեհը ծագեց յուլիսի 26-ին, կիրակի դիւշեր,
ժամի 4-ին և տեղը մինչև առաւօտեան ժամը
11/2 ջրի պակասութեան և հովի սաստկութեան
պատճառով բոցերը ամեն կողմ կը տարածվին
արագաբար և կը լսուին ամեն ինչ: Հրդեհը մոխիր
դարձրեց հայկական չորս մեծ եկեղեցիներ՝ որոնց
իւրաքանչիւրը հազիւ 1,500-ական ոսկով կարող
է վերջնաւորել, հինգ վարժարան, որոնց մէջ նաև
Միացեալ Ընկերութեանց աղջկանց վարժարանը,
վեց ջրաղաց, հազար տուն և քաղաքի մեծ ու
փոքր շուկան 270 խանութներով, որոնց շատերի
մէջն ապրանքներն էլ մոխիր դարձան: 200 տուն
միայն ապտում են: Հրդեհի գիշեր մի կարծի
հայ երիտասարդ բոցերի մէջ նետով լցու-
ման հետեւեալ օրն էլ չորս երիտասարդներ փրկա-
ներէն մնացին: Հրդեհը ծագեցաւ տեղիս դատա-
րանի գրադիր բնիկ Ալեքսանդրի մի թուրքի
տնից:

Տարաբաղը ժողովուրդը չըմակայ այդեւտաննե-
րը ցրված է, հրկիւղեց ներկան ողբալի է, վասն
զի օրական հացի կարօտ են: շատերը ոչինչ չը
կրցան ազատել, այս բան ևս առաւել ցաւալի
է անոր համար, որ գէյթունցիք, ըստ սովորու-
թեան արդէն ամբարած էին իրանց տարեկան ցո-
րենք:

Հալէպի, Մարաշի և Զէյթունի իշխանութիւնը
միջոցներ ձեռք կառնեն հրկիւղեալ ժողովրդեան
օգնելու համար: ամեն կողմէ ուսեստ կը դրուի:
Ամերիկացի միսիոնարը արկածէն անմիջապէս
յետոյ Զէյթուն գալով պատապարեցին իրանց ժո-
ղովրդը: միսիոնարը մեծագուծար նպաստներ
կը ստանան, որով կարող կը լինեն հրապուրել
900-ի չափ հայ ընտանիքներ, ասոնք յոյսերնայն
կայս, կառավարութեան գլխութեան ու պատրիար-
քարանի վրայ դրած են: եթէ փութով օգնութիւն
չի հասնի, կրօնափոխութեան վտանգ կայ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

—Թիւրքաց Սուլթանի գահակալութեան օրը,
Պօլսի հայոց պատրիարքը գնաց կայսերական
պալատը, իր նորահաղորդութիւնները ներկայացնե-
լու համար: Սուլթանը սիրով ընդունեց Յարու-
թիւն պատրիարքին, որը ոտքի վրա կանգնած մի
ուղերձ արտասանեց, որի մէջ գովաբանելով
Սուլթանի հայրական հոգածութիւնը, որ նա ու-
նի իր ժողովրդի վրա, յարակցեց, որ հայ ժողո-
ւորը միշտ աղօթարար է նրա կենքի և գա-
հի հաստատութեան համար: Սուլթանը պատաս-
խանելով պատրիարքի ուղերձին, յայտնեց իր շը-
նորակալութիւնը հայերի հաւատարմութեան հա-
մար, յայտնեց որ կարգադրութիւն է արել վերջին
հրդեհներից մնացածներին օգնելու համար, և
վերջացրեց իր պատասխանը հետեւեալ խօսքերով:
«Իմ բարեկերիս հետ միասին յայտնեցէ իմ շը-
նորակալութիւնը ձեր ժողովրդին: Պատրիարքը
բարեմակարութիւններ անելով հեռացաւ: հեռա-
նային Սուլթանը ասեց հետեւեալը: «Փափագում
եմ մի ուրիշ անգամ ևս ձեզ հետ տեսնվել»:

—Խօսելով բուրձարական հարցի մասին, «Po-
Corresp.» լրագիրը այն միտքն է յայտնում, որ
կօթուրդի պրինցը բարոյական մեծ օգնութիւն է
գտնում այն իրողութեան մէջ, որ պետութիւննե-
րը, բացի Ռուսաստանից, ոչինչ վճարական թալ-
լն անում զէպի Բուլղարիայի նոր իշխանը, որը
շատ լաւ համոզված է, որ նոյն իսկ Թիւրքիան
կը շարունակի իր սովորական դանդաղորդութիւ-
նը և երբեք մի խիստ և որոշ դիմել չի բռնի:

—Բէլգրադից հեռագրում են, որ իբրեւ թէ

Սերբիայի մէջ գտնվող բուլղարացի արտոնական-
ները պատրաստվում են մի ցոյց անելու բուլղա-
րական այժման կառավարութեան դէմ, այդ
պատճառով կառավարութեան կարգադրութեամբ
Սերբիայի սահմանները մի քանի նոր դուռը դօրը
ուղարկվեցաւ:

—Վիեննայի լրագրութեան մի մասը, և դրա
հետ միասին կիսապաշտօնական «Fremdenblatt»
լրագիրը խտտութեամբ յարձակվելով Թիւրքիայի
վրա, մեղադրում են նրան վերին աստիճանի
երկշտութեան և անորոշ լինելու մէջ: Վիեննայի
լրագրութիւնը Թիւրքիայի պարտաւորութիւնն է
համարում աշխատել որքան կարելի է շուտով
հեռացնել բուլղարական բարդութիւնները, որոնք
այդպէս շարունակվելով գուցէ կը վրդովեն եւրո-
պական խաղաղութիւնը:

—Ինչպէս երևում է, բուլղարական նոր մի-
նիստրութիւնը բաղկացած կը լինի Ստամբուլի
մարդկանցից: Ստամբուլի յայտնել է որ ինքը
իր կուսակցութեան հետ կը շարունակեն ընթա-
նալ այժման իրանց ուղղութեամբ, առանց մի
քայլ անգամ չըղվելու:

—Հոկտեմբերից բացվելու է սերբիական սկուսչ-
նիսայի նստաշրջանը: Ընտրութիւնները արդէն
սկսվել են և մինիստրութիւնը մի չըմարեալա-
նով հրամայում է իշխանութեանը չը խառնվել
ընտրութիւնների մէջ և ճնշումներ չը գործել:

—Վիեննայից հեռագրում են հետեւեալը: «Ե-
րէկ Վիեննայի բոլոր ծաղրական թերթերի խմբ-
ընդմէջը հրաւիրվեցան, իշխանութեան կողմից,
որի ներկայացուցիչը հաղորդեց նրանց, որ ար-
տաքին գործերի մինիստրը ստացած տեղեկու-
թիւնների համաձայն, թիւրքաց Սուլթանը շատ
նեղացել է, որ Վիեննայի ծաղրական թերթերը
Սուլթանին նկարում են ծիծաղելի և անվայել
դիմքով: Սոյդ պատճառով կողմնակի կերպով
խնդրեցին խմբագիրներին որքան կարելի է այն-
պէս անել, որ թիւրքաց Սուլթանը վերաւարվելու
առիթիւ չունենայ»:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Թէ որքան շատ անգամ մեծ աղբիւրներն կա-
րող է ունենալ ընթերցան և թիւրքաց մար-
դու վրա, երևում է հետեւեալ դէպքից Պետերբուր-
գում ապրող մի հարուստ ընտանիքի 14 տարեկան
որդին, որ սովորում էր մի մասնաւոր դպրոցում,
սիրում էր կարգաւ հոգեւոր-սուրբ գրքեր: Այդ
տեսակ գրքերի ընթերցանութիւնը այնքան աղ-
ղեց 14 տարեկան պատանու վրա, որ նա սկսեց
խոյս տալ մարդկերանից: Ողորդվելով ճշմարտա-
կան կեանքով նա հրաժարվեց միանշանակաբար
ուսուցիչը, չը նայած որ ծնողները ամեն կերպ
աշխատում էին այդ ուղղութեան առաջն առնել:
Մի գեղեցիկ օր հոգեւոր գրքերով ողորդված պա-
տանին դուրս գնաց և զինքը չը վերադարձաւ:
Ծնողները սկսեցին որոնել իրանց որդուն: մայրը
մտաւ որդու սենեակը և այնտեղ գտաւ մի նա-
մակ, որը նա գրել էր ծնողներին: Սոյդ նամակի
մէջ որդին հրաժեշտի ողջոյն էր տալիս ծը-
նողներին, և գրել էր, որ հնազանդվելով «Բարձ-
րեղի ձայնին» վճռեց թողնել աշխարհը և մտնել
վանք: Ծնողները շտապեցին վանքը գնալ, յի-
րաւի այնտեղ գտան իրանց որդուն: Բայց որքան
ժամանակ և աշխատանք կորցրին խեղճ ծնողնե-
րը, մինչև որ կարողացան իրանց որդուն տուն
բերել: որդին համաձայնեց տուն գալ միայն
այն պայմանով, որ ծնողները վարձեն նրա հա-
մար մի այնպիսի ուսուցիչ, որը սովորեցնէր նը-
րան եկեղեցական պատկերներ նկարելը:

Թիւրքաց կառավարութիւնը մի չըմարեալան
է ուղարկել օտար պետութիւններին, յայտնելով,
որ ինքը մտադրութիւն ունի մի չափ խիստ մի-
ջոցներ գործ դնել օտար երկրներին լրագրիւնքի
այն թղթակցիցների դէմ, որոնք ապրում են Պօլ-
սում և առհասարակ թիւրքաց պետութեան սահ-
մաններում: Խրաքանչիւր թղթակցից, որ կամե-
նում է թիւրքաց սահմաններում լինել, պէտք է
ներկայացնի երկու երաշխաւորող անձինք, տե-
ղական բնակիչներից, որոնք պէտք է հսկեն թղթ-
թակցի վրա և թիւրջ չը տան, որ նրանք անվայել
բաներ գրեն թէ Սուլթանի և թէ կառավարու-
թեան մասին: Այն թղթակցիցը, որը չէ կարող ե-
րաշխաւոր անձինք ներկայացնել, կը հեռացվի
Թիւրքիայից: Հետ է երևակայել թղթակցիցների
դրութիւնը, եթէ իրազարծի մի այդպիսի նախա-
դիւծ, որով թիւրքաց կառավարութիւնը ուղում է
պատասպարել «զրէկ հարուածներին»:

Թիւրքաց Սուլթանը իր հարեմի նոր կառավա-
րիչ Եֆենդի-էֆենդի-Աղային շնորհեց «մեծութիւն»
տիտղոսը, որով օգտվում է միմիայն մեծ-վիզիրը:

Բերլինում մտադրութիւն կայ հիմնելու կա-
նանք բժշկական ճեմարանի: Գերմանական թագա-
ժառանգի ամուսինը, իշխանուհի Վիկտորիան ա-
մենաջերմ համակրող է կանանց բարձր ուսում
ստանալու ձգտմանը, և յիշեալ բարձրագոյն

դպրոցը հիմնելու առաջին ցանկացողներից մէկն
է: Լրագիրները հաղորդում են, որ շուտով
կը բացվի կանանց այդ բժշկական ակադեմիան:

Սերբիական զրկվեց իր ջահիլ—թագաւորի
հարսանիքի հանդիսով դժպիւղելուց: մեծ պետու-
թեան փոքրիկ կայսրը շատ վատաւուղջ է, և
այդ պատճառով վճռված է հարսանիքը յետա-
ձգել երկու տարով:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍՏՈՒՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, 29 օգոստոսի: Երէկ գիշերը այր-
վեցաւ «Ռուսաց նաւագնացական ընկերութեան»
մի նաւը ամբողջ ապրանքի հետ միասին:

ՍՕՖԻԱ, 29 օգոստոսի: Բուլղարիայում և Արե-
ւելեան-Բոսնիայում պաշարման դրութիւնը վեր-
ցված է:

ԼՕՆՊՕՆ, 29 օգոստոսի: Երէկ Միչկետոն-
ում (Խրվանդայում) կայացած միտինգի ժամա-
նակ, որը գումարված էր իրլանդական պատգա-
մաւոր Օրբիէնի կայանաւորութեան դէմ բողոքե-
լու համար, տեղի ունեցան անկարգութիւններ,
որոնց ժամանակ մի քանի ոստիկաններ վիրաւոր-
վեցան և երկու մարդ էլ սպանվեցան:

ՓԱՐԻՑ, 29 օգոստոսի: Բուլղարական հարցի վե-
րաբերալ բանակցութիւնների ժամանակ Կ. Պօլ-
սից հաղորդում են հետեւեալ մանրամասնութիւն-
ները: Բ. Գուսը տեղեկութիւն է ստացել թէ ինչ
կարծիք ունեն Գերմանիան և Ֆրանսիան՝ Բուլղա-
րիա կոմիսարներ ուղարկելու առաջարկութեան
մասին: Երկու պետութիւններն էլ պատասխանել
են, որ ոչինչ չունեն ասելու այդպիսի քայլի
դէմ: Այն ժամանակ Բ. Գուսը դիմեց Գերմանի-
ային խնդրելով որ նա ներգործի Աւստրո-Ունգա-
րիայի վրա, որպէս զի նրան դարձնի յիշեալ ա-
ռաջարկութիւնների կողմը: Գերմանիան այժմ
պատասխանել է որ պատրաստ է պաշտպանելու
այդ առաջարկութիւնները, բայց որ դրանց նա-
խաձեռնութիւնը պէտք է յանձն առնի ինքը Բ.
Գուսը: Այսպիսով Բերլինի կարծիքը սպասում
է, որ միայն ինքիցիստիկ լինի Բուլղարիայի վրա
գերիշխանութիւն ունեցող պետութեան կողմից,
որպէս զի ամենաբոլոր կերպով պաշտպանի ի-
շեալ առաջարկութիւնները:

ՐՈՒՇԵՆՈՒՆ, 29 օգոստոսի: Այստեղի քաղաք-
պետը չը կատարեց Ֆրանսիայի պահանջները, ո-
րոնցով նա պահանջում է ապահովացնել Ֆրան-
սիա-Հայաստանի դրութիւնը, նոյն իսկ հիւպա-
տոսի վտանգ է սպառնում: Այդ պատճառով
Ֆրանսիական կառավարութիւնը թող տուեց
հիւպատոսին անորոշ ժամանակով արձակուրդ
ստանալ և դիմել:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 29 օգոստոսի: Պատերազմական
միջիտարը վերադարձաւ Պետերբուրգ: Լուրերին
նայելով, այն նախագիծը, որով մտադրութիւն
կայ փորձի համար հինգ նահանգներում մտցնել
զինու թագաւորական վաճառքը—կը քննվի պե-
տական խորհրդում աշնան սկզբներին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 30 օգոստոսի: Այսօր, ս. Ալէկ-
սանդր-Դեմիտրով ամեն և թագաւոր կայսրի ան-
ւանակութեան պատճառով Ալէկսանդր-Դեմիտրի
տաճարում կատարվեցաւ ս. Պատարագ այտեղ
եղող Օգոստոսիաւ Սննանց, պաշտօնական աս-
տիճանաւորների և զինուորական պաշտօնատար-
ների ներկայութեամբ: Քաղաքը դարձրաւ իր
գրօշակներով: Ցարիցինի հրապարակի վրա ժողո-
ւրդական դրօսանք կար:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 31 օգոստոսի: Արդարադատու-
թեան միջիտարը վերադառնաւ արձակուրդից:
Սեպտեմբերի մէկից Վոլոժկո-Կամսկի բանկը փո-
խատութիւնների կանի գրաւարան առնելով այն
հացի բեռներին, որոնք ուղղորդում են Օդէսա:

ՓԱՐԻՑ, 31 օգոստոսի: Բուլղարիայից «Jour-
nal des Debats»-ին հաղորդում են, որ Ստամ-
բուլով հրամայել է ձերբակալել Բոջուլաւովին,
մեղադրելով նրան պետական յանցանքների մէջ:
Զերմակալված են նոյնպէս մի քանի բուլղարական
սպաներ: Նրանք մեղադրվում են նրանում որ
մասնակցեցին զինուորական դաւադրութեան մէջ,
որ սարքել է Սֆայայի ոստիկանութիւնը Ստամ-
բուլովին հանել լինելու համար:

ՓԱՐԻՑ, 31 օգոստոսի: Բ. Գուսը բուլղարական
հարցում միանում է Ռուսաստանի առաջարկու-
թիւններին և կը ներկայացնի նրանց Անգլիային,

Խալիպային և Աւստրիային: Գերմանիան կը
պաշտպանի այդ առաջարկութիւնները:

ԹԵԲԷ-ՏՈՐԵՆԵՐ, (Ունդարիա) 31 օգոստոսի: Ե-
րէկ հանդիսաւոր ճաշի ժամանակ աւստրիական
կայսրը առաջարկեց Ռուսաց թագաւոր կայսրի
կենացը, Նորին Մեծութեան անուանակոչութեան
տօնի պատճառով:

ԼՕՆՊՕՆ, 31 օգոստոսի: Աւգանստանի էմիրը
ծանր հիւանդ է: Էյուր-Բանը այժմ կիւլայ-Սա-
լիւրումն է:

ԲԱՐԵԼՍԵՐԳ, 31 օգոստոսի: Այսօր 1 ժամ.
15 րոպ. կէսօրից յետոյ գերմանական կայսր և
կայսրուհին, պրինց Վիլհելմի, նրա կնոջ և պը-
րինց Լէօպոլդի հետ ուղևորվեցան Շտուտին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 սեպտեմբեր: «Nord. Deutsche-
Allgemeine-Zeitung» լրագիրը մէջ կայ մի յօդուած,
որի մէջ այն միտքն է յայտնվում, որ Գերմանիան
բուլղարական հարցում կարող է գործել Ռուսաս-
տանի ցանկութիւնների համեմատ, առանց որ և
է պայմանների, որոնք կարող են ճնշել փոխա-
ղարձ ազատ գործողութիւններ և որոնք կը պա-
հանջեն ծառայութիւն կառավարութեան համար:

«Journal de St. Pétersbourg» այդ յօդուածի ա-
ռիթմով ասում է, որ այդ լի անկեղծութեամբ յօ-
դուածը կարող է ի միջի այլոց պատասխան լի-
նել այն յայտնի գերմանական լրագիրներին, ո-
րոնք յարձակվում են Ռուսաստանի քաղաքակա-
նութեան վրա և յայտնի ուսու լրագիրներին, ո-
րոնք յարձակվում են Գերմանիայի քաղաքակա-
նութեան վրա: Գրանցել, որ մի հարցում, որ ա-
ռաջնակարգ նշանակութիւն ունի, երկու պետու-
թիւններ, որոնց քաղաքականութիւնը չէ նկարկ-
վում միայն օրական գործողութիւններ, միա-
տեսակ հայեացք ունեն և գործում են միաստեակ,
չը պէտք է նեղադրել, որ նրանցից մէկը չը
պէտք է հաւատարմիւն, և իբր թէ այս վերջինը
գործում է առաջինի ճնշման տակ: Ի՞նչ կը լինի
Եւրոպայի խաղաղութեան հետ, եթէ այսպիսի
կասկածանքներ միակ կանոն դառնան ամեն քա-
կաքականութեան:

ՄԵՐՎ, 1 սեպտեմբեր: Թէհրանի այն լուրը,
որ իբր թէ Էյուր-Բանը վաճառված է Աւգանիս-
տանից, հերքվում է վերջին ամենահաստատ տե-
ղեկութիւններով: Էյուր-Բանը գտնվում է այժմ
Հերատի մօտ, նա ունի զօրեղ թիկնապահ զօրք,
որ կազմված է նրա հաւատարմ Աւգանիստանցի-
ներից:

ՇՏԵՏԻՆ, 1 սեպտեմբեր: Գերմանական կայսե-
րական զոյգը երկի հասաւ այստեղ և ժողովրդի
կողմից ողբերկած ընդունելութիւն գտաւ: Իշխան
Բիսմարկ Մնացել է Բերլինում:

ՍՕՖԻԱ, 1 սեպտեմբեր: «Търн. Вѣстн.» լրա-
գրի մէջ կարավելով տպել է մի յօդուած, որի
մէջ ասած է թէ Կօթուրդի պրինց ոչ թէ ժողովր-
դի կամքով է բարձրացել բուլղարական զահի վրա,
այլ միայն Ստամբուլովի կամքով: Այդ յօդուածի
պատճառով Ստամբուլովի կարմնակիցներ յար-
ձակվեցին կարավելով տան և լրագրի տպարանի
վրա և քարուքանդ արեցին նրանց, որից յետոյ
համակրական ցոյցեր արեցին պրինցի պալատի և
Ստամբուլովի տան առաջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 սեպտեմբեր: Երկրորդ փո-
խառութեան տիրութի գլխավոր տարած գումար-
ները ընկան հետեւեալ տոմսերին:

№ սերիայի	տոմսի №	Գումարը:	№ սերիայի	տոմսի №	Գու- մարը:
12,184	24	200,000	12,114	44	
10,986	50	75,000	13,904	45	
16,811	38	40,000	14,439	4	
4,827	9	25,000	875	1	
1,895	36	10,000	16,769	24	
15,904	44	10,000	19,249	26	
2,638	46	10,000	8,837	6	
17,088	6		8,018	4	
19,330	31		5,821	42	
4,131	36		267	49	
5,534	35		6,016	37	
14,542	19		17,677	27	
10,149	35		15,861	7	
17,280	46		11,361	35	
17,704	50		1,060	45	
871	37		14,745	13	
292	32		10,725	5	
15,883	13		14,871	43	
8,098	38		19,420	35	

